## 46. ԾԻՐԻՆ

Վախտի ժամանակով կէլնի մեյ թակավոր. իսա թակավորում իսկի տղա չէլնէ: Ինչ կընդըր դեղ դըրմըն կանի, ճար չէլնէ: Ծատ կմնա, թէ քիչ, մեկ օր իսա թակավոր կկանչի ուր վըզիր, սըդրըզըմ, օնիքյիլըր կասի.

- Էկեքյ տիսնանքյ ի՞նչ ճար անենքյ, ախար ես մնացի առանց որթի: Էլ ճար չունեմ, տյուք մեկ խելքյ խաասուցեքյ:

Վըզիր կասի. - Թակավոր ապրած կենա, մեր ճարն էն ի, որ ես ինան տյու էլնենքյ մեյ տեղ, մեր խալվներ փոխենքյ դւսվրեշանի կլղով ինենքյ քյաղքյե-քյաղաքյ, գյեղէ-գյեղ. վաթւանէ-վաթան, բալքյի տեղմ մեկ ճար անենքյ:

Թակավոր ինըն վըզիր կէլնեն ուրենց խալւսվներ կփոխեն, մէ-մեյ մեկ ձեռքյ դըվրեշի խալավ կխայնեն, կինեն դյունեէն. կան գյըլ: Ծատ մի կէրթըն, քիչմ կէրթըն. մեկ չեոլ-չիմանն դաշտիմ մեչ, պաղ ախպրիմ վերեն կնստեն: Խաց կպընըն, կբաշլայեն խաց ուտել, մեյ էլ տիսնան էն դիհեն դըվրեշմ կուգյը, կասի.
- Պըրև քյէ, թակավոր ապրած կենաս, և պարև քյէ, վըզիր:

Թակավոր, որ կտիսնա, կշիվարի, կասի. - Դըվրե՛շ, մենքյ էլ քյէ պես դըվրեշ ենքյ, տյու ի՞նչ կիտցար ես թակավորն եմ. էս էլ՝ վըզիր:

Դըվրեշ կասի. - Խա՛, ես կիտեմ, տյու թակավոր ես, ի՞նչ դըրդի խամար էլ կան կուգյըս:

Թակավոր կէլնի, դըվրեշի ծեռ կպռնի, կասի. - Ամա՛ն, դըվրեշ, քյո բըխտն եմ ինգյէ, թէ ճարմ անես՝ տյու անես:

Դըվրեշ կխանի ծոցից խնձորմ կուտա թակավորուն. կասի. - Առա՛ իսա խնձհր, իրիկուն կէրթըս տուն, կկիսես, կես տյու կուտես, կես՝ քյո կնիկ, աման էլ կըքլով, որ ինչ տղա, որ կէլնի քյէ, չյում տսնխինգյ տարի մնա քյէ, տսնխինգյ տարուց սորա, ես կուգյըմ տսնխինգյ օր էլ տաս զիկ, տանեմ քիչմ ուզեմ էլմ պիրեմ տամ քյէ:

Թակավոր շատ կուրախնա, կառնի խնձհր, պայման կանի խե դըվրիշին, ետ կտառնա կուգյը տուն:

Իրիկուն օնիքյիլըր կժողվոտվին կուգյըն մո թակավոր, գյըլ պըրով կանեն, շատ կուրախնան, քյանիմ սըհըթից սորա, մաջլիս կցվրվի:

Թակավոր կէրթը ուր օդեն, խնձհր կկիսի, կես ինքյ կուտի, կես՝ ուր կնիկ:

Աստծու խրամանքյով կնիկ կմնա տղով: Ինն ամիս, ինն օր, ին սըհըթ, ին թըխխա կթմմի, տղեն կէլնի: Տղեն լաճ ի, անուն կտնեն Ծիրին:

Վըրհաալի, ինոնց ամսով տարով կնցնի, մեյ խոսքով թակավորու տղեն

կճռճանը, կէլնի տսնխինգյ տարեկան, զմեն օր կէրթը փողան խէ տղեյնեկյաց կխաղա: Մեկ օր կեսավուր գյընխ դըվրեշ կուգյը, տղին փողան կտիսնա, կասի. - Է՛յ, շահզադա՛, իրիկուն որ կէրթաս տուն, թակավորուն կասես՝ դըվրեշ իկեր էր ուր ամանաթ կուզեր, տես ի՞նչ կասի, սրե՛ զիկ ասա:

Տղեն իրիկուն կէրթը տուն, թակավորուն կասի. - Թակավոր ապրած կենաս. էսօր մեյ խատ դըվրեշ իկիր էր, զի կասեր՝ կնը՛ թակավորուն ասա. դըվրեշ իկե ուր ամանաթ կուզի. ես էլ ասի՝ աղե՞կ: Ինչ ի ինոր ամանաթ, տու՛ր տանեմ, տամ:

Թակավոր կասի. - Պընն չէ, բալա՛մ, վաղ որ կէրթըս, դըվրեշին ասա՝ մտես կնաց խորս չասի, յան չէ կնը յուրուշ փողան խաղա՛, էնտեղ մ՚էրթը:

Էն մեկէլ օր Շիրին կէրթը յուրիշ փողան կխաղա՛: Չյում կեսավուր դըվրեշ կուգյը: Կասի. - Շահզըդա. խորդ ասի՞ր:

Կասի. - Վա՛, մտես կնըց:

Դըվրեշ կասի. - Դէ՛, շուտ կնը, խորդ ասա, տե՛ս ի՞նչ կասի:

Շիրին ուր խաղ կթողնի, կվազի կէրթը տուն, կասի.

- Թակավոր ապրած կենաս, էլմէլ դըվրեշ էկավ ուր ամանաթ կուզեր, ես էլ ասի՝ մտես կնըց, խորս չասի:

Թակավոր շատ կմտածի, ճար կկտրի, լաճուն կասի. - Բալա՛մ, կնը դըվրեշին ասա, քյո ամանաթ տա՛ր:

Շիրին կէրթը, դըվրեշին կասի. - Թակավորուն ասի, ասաց՝ կնը դըվրեշին ասա՝ թող ուր ամանաթ տանի. քյո ամանաթն ի՞նչ ի:

Դըվրեշ ծեռ կթըլի Շիրին կդնի վեր ուր թիվին, կառնի կտանի: Շատ կտանի, քիչ կտանի, մեկ պանցր սարիմ գյլոխ կէճուցի տակ, կասի. - Շիրի՛ն, նստի իսա քյարի ըռըճ, ես կէրթըմ ինատեխ կնստեմ կկըրդըմ, բիրդըն իսա քյարի մեջից տյուում կպըցվի, չվըխենա՞ս, շոտմ մտի ներս, էնտեղ օդեմ կա, մեչ էն օդին ախչիկմ կա, էն ախչկա կուշտ փախրոտ կութիմ կա, պատեր բիթյուն լալ ու մըրջան են, հեչ մեկ պընի ծեռ չիտաս, առ կութին, փախի տյուս:

Շիրին կասի. - Շատ աղե՞կ, աստված չամչցուցի:

Շիրին կնստի էնտեղ, դըվրեշ կէրթը ուրիշ քյարիմ տակ, կբաշլայի ռըմ թըլեղ, ուր գյիրքյ կըրդըլ: Մեկ էլ բիրդըն չըխկալեն տյուռ կպըցվի, Շիրին կմտնի ներս, կտիսնա որ ի՞նչ՝ ուր խոր օդի զըրդարանքյ դո՞ր, ըսուեղ դո՞ր, ըսուեղ տաս կաթ չանգյ ուր խոր օդեն խորոտ ի:

Մեկ գյովիզար ախչիկմ նստէ քյրգյընխ կանի, չուտես, չխմես՝ թամաշա անես: Նռան խատի պես շողշղա, պանըկի քյուլի պես սիվտակ: Սև չամիչ, որը կուտի՝ բողլոչաղ բըլի կանի: Ինքյ զանանա մեյ նման չկա: Շիրին կխասնի, կութին կառնի, կտըռնու, կխասնի չյում տյուռ, կասի՝ ըհ դըվրեշի խերն անիծած, իսա խորոտ ախչիկ ես թողնեմ ըստեղ դըր էրթըմ, վայւհ, պիտի էրթըմ, պըքյմ առնեմ, նոր էլնեմ տյուռ: Կտըռնու, կէրթը, ծեռ կդնի վեր ախչկա թիվին, կկզվի որ պիտի պաքյի, մեկ էր բիրդըն տյուռ կկոծվի:

Դըվրեշի ռըմ կավիրի, գյիրքյ կկոծվի: Դըվրեշ փեռր փեռշման կթողնի կէրթը:

Շիրին կմնա մեչ էտա հէրին, կիրիշկա՝ ի՞նչ, մութ խռ-խըրըքը տեղմ էր, մըյըր էն էրևացածներ բիթուն սեյրի էր: Ո՛չ ախչիկ կա, ո՛չ դյուռ շավահիլ, ինքյ մենակ մնացե մութ հէրի մեչ: Խեյքյ կէրթը, բայլմիշ կէլնի, պերայնավեր կինի կմնա: Շատ թէ քիչ աստված կիտի, մեկ էլ բիրդըն խեյքյ կուգյը վերեն, կտիսնա, որ հէրի

տկեն ճրի գոգոոց կուգյա. կասի՝ տեր աստված, իսա ես դժ՞ր եմ, էլ ի՞նչ ճար անեմ: Ծատ կմտածի, քիչ կմտածի, մեկ էլ բիրդմն խելքյ կուգյա վերեն, գյետին ականջ կանի, կլսի. որ ճրի ծեն ի, կասի՝ ալբաթ էսա ճյուր չի մնա սարի տակ, տեղեմ տյուս կուտա, ես պիտի փորեմ, չյում խասնեմ ճյուր, տեսնամ ի՞ն-չըխ ի:

Խմնչալ կխանի, կբաշլայի փորել: Ծատ կփորի, քիչ կփորի, չյում կխասնի ճյուր, կտիսնա, որ ի՞նչ՝ աճագյին գյետմ սարի տկեն կընցնի:

Ծիրին կասի. - Ալբաթ իսա գյետ տեղմ կուտա տյուս, ես պիտի թմլեմ մեչ, թե խեխթվեմ, թե փոթնեմ, մնամ իսատեղ անութի պիտի մեռնեմ:

Իրեքյ տիր աստծու անուն կուտա, ուր կթմլի գյետ:

Տյու մի ասի, էն տեղեն ի՞նչ գյետ կուգյա տյուս, նախրչին ուր դավրներ պիրե էնտեղ ճրե. ինքյն էլ նստե գյարե խսւց կթաթխի ճյուր, կկակղծու, կուտի: Նախրչին մեկ էլ կտիսնա՝ ջուխտմ մարթու ոտ ճյուրի մեչեն իտուր տյուս, մեկ էլ ակավ, մեկ էլ իտուր տյուս: Նախրչին ծեռ թմլեց պռնեց, քյաշեց տյուս, կախեց գլըխվեր, որ ոտաց տայ թփեց, թե պոռտն օլորեց, վարճասլ, Ծիրինի խելքյն էկավ վերեն:

Նախրչին ասաց. - Տո տղա՛, իսա գյետ սարի տկեն տյուս կուտաւ, տյու որտեղեն ես ինգյե մեչ:

Ծիրին կասի. - Խերի՛կ, չեմ կիտե, ես էն կիտեմ, որ քյո կուշտ նստեր եմ:

Հովիվ կասի՝ որ ըսկուն ի, զի լաճ չկեր, աստված զի լաճմ իտուր, տյու իմ խալալ տղեն ես:

Ծիրին կէլնի նախրչուն լաճ: Վարճասլի յոթ օր կմնա, ավուր մեկ, նախիր կտանեն յուրուշ սարիմ գլըխ կարւսծան: Ծիրին կտիսնա, որ սարի էմեկէլ իրես քյաղաքյմ կա, նախրչուն կասի. - Աղա՛, ինա ի՞նչ քյաղաքյ ի:

Նախրչին կասի. - Մեր թակավորու քյաղաքյն ի: Ծիրին կասի. - Աղա՛, մեռնեմ քյե, էնա կսրախ տուր, մեյ խատ խեծնեմ, էրթմ էնտեղ թամաշա անեմ, իրիկուն շոտ կտմռնամ կուգյմմ:

Նախրչին, որ Ծիրին շատ կուզեր, խաթրից չէլնի, կասի. - Կնա, ամա իրիկուն շոտ արե, չէլնի ծիյու տերն իմնմ, սորա մեր ճմղ կկտրի:

Ծիրին կէլնի, կսրախ կխեծնի, չլուդ առանց գյմմ, ուր մեճմց կաշին կտնի վիզ, կքշի կէրթմ մեչ քյաղքյին, թակավորու տռան մռմճ կկայնի:

Թակավորու սեյիսներ, որ կտիսնան, վերեն կծծղան:

Ծիրին կպմրկանա, կասի. - Ի՞նչ յաբանի մարթ եքյ, մմնգյմր պիտի զմեն կախ մարթ գյա ծեռ տռան վերեն, որ վմզեքյ ծիյու գլիխ պռնեքյ: Ես էլ մարթմ եմ, բմլքյի, թակավորու խետ պան մ՛ունեմ, յա խոտ խացմ կուտեմ, կթողնեմ, կէրթամ:

Սեյիսներ, որ կտեսնան իսոր ջույմբ, կվազեն ծիյու գլըխ կպռնեն, ծիուց կէճուցեն, խմբմր կուտան թակավորուն, թե ըսկնմ խորոտ ջճելմ իկեր ի, կուզի քյե տիսնա:

Թակավոր ամր կանի, կասի. - Տարեքյ դիվանխանեն, թող նստի, չյում ես կուգյմմ:

Ծիրինին կտանեն դիվանխանեն: Ծիրին կնստի մեյ խատ, ուրն ուր կմտածի, կասի. «Տո՛, ես էլ թակավորում տղա եմ էլե, դմվրեշ էկավ զիկ տարավ սարի գլըխ, ինքյ գյիրքյ կարդաց, տյոտ պմցվսվ, ես մտա ներս էն խորոտ ախչիկն տեսա, կութի վերուցի, մաշտենքյ էն կութին ջեռ՞բս ի»:

Ծեռ կուտա ջեռբ կտիսնա, որ կութին ջեռբն ի, կխանի տյուս, կտիսնա, փախրոտ, խարամ կութի մի, կասի. «Մաշտենքյ ի՞նչ կութի էր, որ դմվրեշ ըսկուն ջալըշմիշ

կէլնէր»: Մ՛էկ էլ բիրդմնն կութին կպանա, կտիսնա ի՞նչ՝ քյառսուն խատ փնրի, մէկ դյուֆ կզանի, մէկ փող կփչի, մէկ սազ կզննի, մէկ քյնմննն կքյնշի, եոսունվեցն էլ կբաշլայէն ծեռնախաղ խաղալ:

Ծիրին որ կտիսնա, կզարմանա, ըսկուն շաշրթմիշ կանի, կինի վեր քյամկին, ոտ կդիպնի կութուն, կութին կկոծկվի: Էդա փնրիքյ մե մէկ ոսկի կպիրեն, կտնեն Ծիրինի ննռնճ, կթոնեն, կէրթնն: Ծիրին որ կտիսնա՝ շատ կուրախնա, կբաշլայի ննն կութին պննննլ, փնրիքյ խաղցուցել, կութին կոծել, քյառսուն ոսկի լցել շեռք:

Խաբար տանքյ թակավորուց:

Էդա թակավորու ախչիկ, որ կլսի ըսննյ խորոտ ջահելմ, որ իկե ուրենց տուն՝ կուզի թակավոր տիսնալ, կասի. – Վա՛լահ, զիկ ուզող ի իկե, էլնեմ, էրթնմ, խենքյ տղեն խորո՞տ ի:

Կուզյն փենշնրից կիրիշկի, կտիսնա, որ ինքյ Ծիրին նստե, կութին կպննն, կութու մեջեն քյառսուն փնրի, չորսն սազ կզննեն, եոսունվեցն կխաղան, կութին, որ կկոծի, մե մէկ ոսկի կուտան Ծիրինին, կթոնեն կէրթան:

Ախչիկն որ կտիսնա, կվազի մո թակավոր, կասի. – Թակավոր ապրած կենաս, արե հրաշք տեսի, լաճմ իկե մեր դիվանխանեն, տես ի՞նչ օյինտիր կանի:

Թակավորն էլ կէյնի ախչկան խետ կուզյնն փենջնրից գյախտիկ թամաշա կանեն: Թակավոր, որ կտիսնա իսա կութին, կասի. – Ախչի՛կ, կանա՞ս ըսկուն անե, որ էսա կութին խափեղութնով լաճուց առնենքյ, յան չէ՝ տյու սիրվի վեր լաճուն, քյե տամ ինոր, զմեն իրիկուն կութին պննննքյ թող փնրիքյ գյնն, թամաշա անենքյ:

Կմնա չյում կեսավուր, թակավոր լաճուն կկանչի ուր մոտ, մեյ տեղ խաց կուտեն: Ծիրին կէլնի, խաց էլ կուզի, որ էրթն:

Թակավորն կասի. – Էրթալ չկա, չյում յոթն օր տյու իմ խուրն ես, յոթ օրից սորա, պնրով էկար, խննզնր պնրի:

Ծիրին զնթի նախրչուն մոռցե, թակավորու տուն կուտի, կխմի, կիշեր-ցերեկ ուր կութին կպնննն փնրիքյ կուզյնն քյեֆ կանի, չյում յոթն օր կթմմի: Ծիրին կէլնի, առատմե շուտ նլ նջնլս, կութին կմոռնա պնտցին տակ, կխեծնի ուր ծին, յալլա՛հ կէրթն:

Թակավորու ախչիկ, որ կիշեր-ցերեկ ինգյիր էր կութու իտև, չէր կանա գյողնե, կէրթն լաճու տեղ կվերուցի, կտիսնա կութին դն ի. կվ:ռնի ուրախ-ուրախ կվնզի մո թակավոր, կասի. – Թակավոր ապրած կէնաս, լաճ կննցե, կութին մոռցե, առա՛ գյոկո պիրիցի:

Թակավոր կուրախնա, կութին կառնի, շոտմ կպանսւ: Մ՛էկ էլ բիրդնն կութու մեչեն, քյառսուն արաբ մեյ-մեկ չոմախ ձեռքյներ, կխասնեն տեխ թակավոր՝ տուր, որ կուտաս:

Թակավոր էն կննդնր ուր կթնլի դես-դեն, ճար չէլնե, մեկ էլ ինչխ կէլնի՝ թակավորու ոտք կտիպնի կութուն, կութին կկոծվի: Էտ արաբներ մե մեկ դնվի գյլոխ կտնեն թակավորու ննռնճ, կթոնեն կէրթնն:

Թակավոր կիսամեռ էլեր ի, նխու կութուն էլ ծեռ չի տա:

Ծիրին, որ կէրթն կես ճննբնխ, բիրդնն կութին կինի միտքյ, ծեռ կուտա շեքեր, կտիսնա, որ կութին մոռցեր ի, ետ կտննռնա, կուզյն թակավորու տռան վերեն, կբոռա, կասի. «Իմ կութին մոռցիր եմ իսա տեղ, կուտաքյ՞, թե չէ՝ կէրթնմ ննքյնր-մննսքյնր կժողվեմ, կուզյնմ ծեր քյաղաքյ դակն ու վրա կանեմ»:

Թակավոր խարար կճամխի, կասի. - Աստծու սիրուն, ուր կութին գյետ ճան էնտեղն ի, մենքյ ծեռ չենքյ կանա տա. թո ինքյ գյն տանի:

Շիրին որ կլսի կզմրմանա, կասի. «Ջանմ, ըսկնն կութին մարթու ծեռն ինի, էլ ի՞նչխ կուտան ետ»: Ծիյուց կէճնի տակ. կէրթն թակավորու էօդեն, կտիսնա, որ թակավոր խիվանդ պառկե, կութին էլ թնլուկ դնյի:

Կասի. - Թակավոր ապրած կենա: Էն ի՞նչ բնս ի, տյու ի՞նչի ես խիվնդցե:

Թակավոր կասի. - Տնավե՛ր, կութիդ մոոցեր իր, ես էլ չկիտցա, պիրի պնցի, քյառսուն արաբ մեչեն տյուս էկան, մե-մեկ չոմախ ծեռքյներ, խասան տեխ զիկ. էն կննդնր զարկիցին, քիչ մնաց մեռնի: Աստծուց էր կութին շուտ կոծվավ, էնա դնվի գյլխներ պիրին իմ նռնճ, թողին կննցին:

Շիրին կասի. - Ապա ծեր դնվին ի՞նչ էր խետ իմ կութուն, ինոր տըլըսըմ իմ գյլխովն էր, ես չէլնեմ՝ մարթ չկանա պանն, կայնի պննննմ, տյուքյ էլ թամաշա արեքյ:

Թակավոր կասի. - Աստծու սիրուն, իրար մի տա, արաբներ էլմ չէլնի գյնն:

Շիրին կասի. - Մի վնխենա:

Կութին կպննն, քյառսուն փնրի, փող ու դֆով, սազ-քյնմննով կթոնեն մեյդան: Չորս կզննեն, եոսունվեցն կխաղան: Քիշմ քյեֆ կանեն, կութին կկոծի. մեյ-մեյ ոսկի կպիրեն, կտնեն Շիրինի նռնճ, կթոնեն կէրթան:

Թակավոր, որ կտիսնա, շատ կզարմանա, կասի. - Տղա՛ Շիրին, մանե, մէլնի, արե էլի զի փեսա:

Շիրին կնքյով կանի, կէլնի թակավորուն փեսա:

Կասի թակավորուն. - Ես էն կսւբլով քյո ախչիկ կառնեմ, որ փսայվելուս պես՝ առնեմ իմ կնիկ, էրթնմ իմ երկիր, ես էլ թակավորում տղա եմ:

Թակավոր կնքյով կանի:

Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, քյանիմ ամսուց սորա Շիրին կառնի ուր կնիկ, ուր էլած մալեր կպառնւս ծիանքյ, կինի ճնմբնխ, որ էրթն ուր տուն:

Քյաղքյից որ կէլնի տյուս, Շիրին կտիսնա իրեքյ մարթ, մեյ խատ մեռել թնլիր են գյետին, մեյ-մեկ մեյ փետ առիր են ինգյիր են վերեն, զնր, որ կզանեն:

Շիրին, որ կտիսնա, կէրթն մոտ իտա մարթեր, կասի. - Ջա՛նմ, գյետ իսա մեռեր ի, մեռելից ի՞նչ կուզեքյ:

Մեյն կասի. - Տյու չես կիտե, իմ խազար կուռուշն ի կիրե:

Մեկն կասի. - Իմ խինգ խարիր կուռուշն ի կիրե:

Մեկն կասի. - Իմ խարիր կուռուշն ի կիրե:

Մեյդեճեն էլ մեռելին կթփեն:

Շիրին կխանի ուր ջեռբեն էտա մարթիկաց փնրեն կուտա, մեռլին կպատնքյի, կտանի ուր ծեռնով կխոռի, կթոնի կէրթն:

Շիրին ուր կնիկմ տեղ կէրթնն, մեկ էլ կտիսնան, որ մեռել էլե վեր ինգյե իտվներ. վնզելեն կուգյաւ:

Շիրին կասի. - Տո՛ մեռել, ախր ես քյե խորիցի, զիզնից ի՞նչ կուզես, ինգյիր ես իմ իտև կուգյնս:

Մեռել կասի. - Էն աղեկութեն, որ տյու զիկ արիր, աստված զիկ ճրաման արաց, ես պիտի գյնմ խե քյե, ծիանքյտերաց մոյաթ կէնամ, չյում խասնենքյ ծեր տուն: Ես զաթի մեյ տիր, մեռիր եմ, էլ նն՛ կուտեմ, նն՛ կխմեմ, նն՛ կքյնեմ, մենակ թե քյո աղեկութնի խամար աստված զիկ ճնմխեց, աղեկութենմ էլ ես քյե անեմ:

Ծիրին էլ պա̈ն չասե: Մեռել կիսկի ուր ա̈ռա̈ճ. կինեն ճա̈մբա̈խ. շատ մի կէրթա̈ն. քիչմ կէրթա̈ն, չյում իրիկուն ճամբախ կէրթա̈ն:

Ձեռլ-չիման դաշտիմ մեչ Ծիրին ուր չադր կզա̈նի. խետ ուր կնկյան ուրենց չայ կխմեն. խաց-մաց կուտեն. կպառկեն, կքյնեն: Մեռել կուգյա̈ չադրի ա̈ռաճ կկայնի: Չյում կես կիշերին մեռել մեկ էլ կտիսնա դա̈վրեշ էնդիհեն էկավ:

Տյու մի ասե՝ դա̈վրեշ ռա̈մդար ի, սեյրիբազ ի, աշխրիս մեչ ինչ որ էլնի, ինոր մոտ ճայտնի ի: Դա̈վրեշ. որ ուր ռա̈մ կթալի, կտիսնա. որ Ծիրինի աստղ լուսովցեր ի, էլի ինցյե դյունեեն կան գյալ, չյում կուգյա ըստեղ Ծիրինին կկընդնի:

Դավրեշ կանի, որ մտնի չադրի տակ. մեռել տիմաց կկտրի, կասի. - Է՜յ. դո̈՞ր կէրթա̈ս: Թակավորու լաճ քյներ ի:

Դա̈վրեշ կասի. - Թող որ էրթամ. զիկ ամանաթմ կա մոտ Ծիրին. առնեմ տանեմ:

Մեռել կասի. - Խա̈զար գյլխեն էլնես, ես չեմ թողնի մտնես չադր:

Մեկ ինորից, մեկ ինորից՝ կանեն կռիվ: Մեռելին զաթի տեղ չի ցավա. դա̈վրեշ ինչ կանդա̈ր կզա̈նի, փա̈րա չանի, աման մեռել դավրեշի մուրռուից կպռնի էն կա̈նդա̈ր կքյա̈շքյշի, չյում կիսկի գյետին, վիզ կկտրի. կտանի թա̈լի փոսիմ մեչ. կուգյա̈ կկայնի ուր տեղ: Չյում առատուն Ծիրին կէլնի վեր. ուրենց չայ-կա̈յֆեն կխմեն, խաց-մաց կուտեն. պեռներ կպառնան, կինին ճամբախ:

Մեռել Ծիրինին պա̈ն չասի: Շատ մի կէրթա̈ն. քիչ մի կէրթան դա̈րա թափա դյում դյուզ կէրթա̈ն: Չյում իրիկուն ո՛չ գյեղիմ կխասնեն, ո՛չ քյաղքյիմ, էլ մ՚էլ չեռլ-չիման դաշտիմ մեչ չադր կզա̈նեն. Ծիրին ուր կնիկ մեյտեղ կնստեն. կուտեն կխմեն, կպառկեն քյնեն: Մեռել էլմէլ կուգյա̈ չադրի ա̈ռա̈ճ ճազր կկայնի, չյում կես կիշերին կտիսնա, ըհը՛, դա̈վրեշ գյոկո էկավ, կասի. - Տո՛ դա̈վրե՛շ, խերդ անիծած, ես էրեկն էր, քյե մորթիցի, էլմ ի՞նչխ յա̈րա̈ր էլար էկար:

Դա̈վրեշ կասի. - Ես որ քյո մորթելով մեռնեմ. էլ ինչի խամար եմ. էսօր ի՞նչխ կանես, խո իմ ամանաթ կտանեմ:

Մեռել կասի. - Վալա՛. քյանի ես կամ, քյեռռնաս, չես տիսնա:

Դա̈վրեշ, մեռել կկպնեն իրար, ռնգյ ճայ գրնգ կխասնեն մեյ մեկու. ինչ կա̈նդա̈ր կզա̈նեն, թո զանեն: Խո մեռելին տեղ չի ցավա: Մեռել էլմ էլ դա̈վրեշին կթա̈լի գյետին. աղեկմ կկդրդի, կանի տսվերկու փառչա. կտանի զմեն կտոր մեկ առտի մեչ կթա̈լի. կասի. - Հը՛, դե ըսդիեն էլ էլի վեր:

Էլմ էլ կուգյա̈ ուր տեղ կկայնի, չյում առատուն Ծիրին կէլնի. խեղճ միամիտ չկիտի կիշեր ինչ որ էլե ուրենց: Չայ. կա̈յֆեն կխմեն, խաց-մաց կուտեն, պեռներ կպա̈ռնան, կինեն ճա̈մբա̈խ չյում իրիկուն, շատ մի կէրթա̈ն. քիչ մի կէրթա̈ն, դա̈րա-թափա̈ դյում-դյուզ կէրթա̈ն, ո՛չ գյեղիմ կխասնեն, ո՛չ էլ քյաղքյի. չեռլ-չիման դաշտիմ մեչ չադրմ կզա̈նեն:

Ծիրին կասի. - Տո՛ մեռել, էսա էրկու կիշեր ի տյու կկայնես չյում առատուն, էսօրն էլ ես կկայնեմ:

Մեռել կասի. - Ես զաթի մեյ դիր մեռեր եմ. զիկ ի՞նչ քյնել, տյու քյո տեղ պառկի. ռճաթ քյնի:

Ինչ որ կանի՝ Ծիրինի խետ ճար չէլնե:

Մեռել կասի. - Դե որ ըդսկնա եի, տյու կիտես, ես կինեմ ըստեղ. կպառկեմ. էլ չեմ ա̈րթնա̈, չյում չպիրես էրկու քյար իմ ակնշի իտև չչխկացուցես. չեմ ա̈րթնա̈:

Մեռել կինի էնտեղ կպառկի: Ծիրին, ուր կնգա̈ն խետ. խաց-մաց կուտեն, կնիկ կպառկցուցի, ինքյ կէլնի չադրի ա̈ռա̈ճ կկայնի. չյում կես կիշրին, մեկ էլ կտիսնա.

դյավրեշ էն դիՃեն էկավ, Ծիրին որ տեսավ. ախ տվեց վերեն. թուր քյաշեց խասավ տեխ. դավրեշ պռնեց Ծիրինին. թալեց գյետին. ծեռքյեր կապեց. ասաց. - Բալա՛մ. իմ ծեռ չէրթա քյե սպանեմ. տյու իմ տղեն ես, ո՛չ թե թակավորուն. աման տյու բեբախտ էկար տյուս: Ըս կանդյար օր իմ կութին առիր. փախար չի կնդնեմ. սար քյսրեր կան տվի, քյո պատիժն էն ի. ծեռքյերդ կապուկ կաց իսատեղ:

Դյավրեշ կառնի ուր կութին, Ծիրինի կնիկ, էլած-չէլած. բիթյուն մեկտեղ, կառնի կէրթա:

Ծիրին կմնա չյում առատուն. դեն պռտվելով. դես պռտվելով. խաւզար չեռրով ուր ծեռքյեր կառցկի. կէլնի կտիսնա նա՛ կնիկ կա. նա՛ էլ կութի. մենակ մեռել էն տեղն ինգյուկ: Էրկու քյար կառնի մեռելի ականջին կչխչխկացուցի. մեռել կէլնի վեր. կասի. - Տեսա՞ր ախր էն անխոգյին էսա էրկու կիշեր էր իմ գյլոխ ի՞նչ կխաներ: Չէլնի՞ էլմ էն էր էկավ ըսկնա արաց:

Ծիրին կասի. - Չեմ կիտե, մեռե՛լ, իմ ճար մնացիր տյու:

Մեռել կէլնի խետ Ծիրինին կինին սար քյար դավրեշ փնտրեն: Ծատմ կէրթան, քիչմ կէրթան. անվերվերի սարեր կնցնեն. չյում կխասնեն Սիպտակ ծովու քյանար. կտիսնան, որ քյեռշկմ-սարեմ կա շինուկ. որ չուտես, չխմես՝ թամաշա անես:

Մեռել կասի. - Ծիրի՛ն, թե ճարմ անենքյ, խաբարմ առնենքյ ըստեղեն ի. ըստեղ չէլնի մե ճար չկա:

Մեռել կէրթա տյուռ կթփի: Տո տյու մ'ասե, որ իտա տներ դավրեշի մոր տներն ի: Դյավրեշի մեր որ կուգյա տյուռ կպանա, կտիսնան ինչ՝ մեկ գարշելի ջադի պառավմ ծախ ծիծ թալե վեր աչ թևին, աչ ծիծ թալե վեր ծախ թևին, ինքյ մարթակեր, ատմներմ ունի մեյ-մեյ դեռշամա. մեկ աչք ունի վեր ճայտին ի, ճրաքյի պես կվլառվի:

Մեռել բիրդան որ կզանի պառվու սրտին, կբաշլայեն գյուլաշ թալել: Իրեքյ սաՃաթ խե մեյ-մեկ էլի չաբալամիշ կէլնեն: Ծիրին կտիսնա, որ բոշ ի. ճար չէլնե խետ պառվուն, իտիվանց կխասնի. պառվու ոտքեր կպռնի կայիմ կքյաշի. պառավ կինի. մեռել կխեծնի վեր պառվու սրտին. ծծեր կայիմ կպռնի: Ծծի ցավից պառավ կզաւփթվի: Մեռել կասի. - Ծիրի՛ն, շուտ արա. մտի պառվու տուն չորս խատ ցից պե, մեյ խատ օթակ:

Ծիրին կէրթա չորս ցից, մեկ օթակ կպիրի, գետնի վերեն խաչ փակ կզանեն. պառվու ծեռքյեր, ոտքեր կայիմ կկապեն. պառավ կմնա խաչուկ. լարու՛կ վեր քյամկին պառկուկ:

Մեռել ինանն Ծիրին մեյ-մեյ մեկ փետ կառնեն կուգյան տեխ պառվու ջան. տուր որ կուտաս, էն կանդյար կզանեն, որ պառվու ճար կկտրի, կասի. - Ջա՛նմ, զիկ ինչի՞ կսպանեքյ, ի՞նչ որ կուզեքյ, ասեքյ կուտամ:

Մեռել կասի. - Պան չենքյ ուզե, մեր ուզածն էն ի, որ դյավրեշի տեղ մե շանց տաս:

Պառավ կասի. - Տնավիրնե՛ր, դյավրեշ գյեռ ծովու մեչտեղ կղզիմ կա. ինոր տուն դա եի. դե կնացեքյ:

Մեռել կասի. - Դյավրեշ քյե ի՞նչ ի:

Պառավ կասի. - Իմ տղեն ի:

Մեռել կասի. - Ապա որ քյո տղեն ի, տյու ի՞նչխ կէրթաս ինոր մոտ, կուգյաս:

Կասի. - Ես չեմ կիտե, չեմ էրթա:

Մեռել, Ծիրին էլմ կբաշլայեն փետով զանել: Պառավ կտիսնա, որ էլ ճար չկա,

ինքյ պիտի մեռնի, կասի. - Ջա՛նմ, կնացեքյ մեր տռան իտև գյեոմշում տիկ կա. պիրեքյ ըստեղ, աղեկմ փչեքյ, խեզնենքյ էրթսւնքյ:

Մեռել կէրթա̈, տիկ կպիրի, կտիսնա, որ էնտեղ մե խատ էլ մախաթմ կա. մախաթն էլ կառնի, կպիրի տիկ կփչեն, թողեն վեր ծովուն, պառվուն կխանեն վեր, մեռել կասի. - Ծիրի՛ն, տյու էնա ցցեր վերու՛:

Ծիրին ցցեր կառնի, մեռել՝ մախաթ, պառավ կխեզնի վեր տկին, մեռել կխեզնի ինոր իտև, Ծիրին էլ մեռլի իտև, կինեն վեր ծովուն յալլա՛հ կէրթա̈ն:

Պառավ կմտածի ի՞նչխ անեմ իսոնց խեխթեմ, մախսուս տիկ կքերթի, որ ինեն տակ:

Մեռել բիրդա̈ն մախաթ կխշթի, կասի. - Դե՛, դողրի քյշի:

Պառավ կմնա շիվար. զմեն քյերթըվելուն մեկ մախաթ կխշթվի: Ճար նաչար կտանի չյում էտա կղզին կխանի տյուս: Էլմ էլ էնտեղ կպռնեն պառվուն կխաչեն գյետին, ճոչ քյարմ կտնեն վեր սրտին, կէրթա̈ն տեխ դա̈վրեշի տուն:

Մեռել կասի. - Ծիրի՛ն, գյեո հա, քյո կնիյկ, նստե փենջարեն կույա̈. ես կէրթա̈մ ինատեղ մեչ ա̈ռվին կինեմ կպառկեմ, տյու կնա̈ մո քյո կնիկ, նստեքյ մեյտեղ, կնգյա̈նդ ասա. բա̈լքյի ինքյ ճարմ անի, դա̈վրեշի խոգյու տեղ խասկնա, ես էրկու դիր դա̈վրեշ սպանիցի, կա, չկա ինոր խոգյին յուրիշ տեղ ի: Էնոր խոգյու տեղ որ կխասկնանքյ, արե էլմ քյար իմ ակնշի իտև չխչխկացու, ես կէլնեմ. ինոր պաս կիփեմ:

Մեռել կէրթա̈ ա̈ռվի մը մեչ կպառկի, կմնա:

Ծիրին կէրթա̈ տյուռ կթփի: Կնիյ որ կտիսնա Ծիրին էկավ. շատ կուրախնա, տյուռ կպանա, կէրթա̈ն վեր կնստեն: Կասի. - Կնիկ՛, տյու ճարմ արա, բալքյի դա̈վրեշու խոգյու տեղ խասկնաս, որ ճարմ անենքյ, էլմ քյե տանենքյ:

Կմնան չյուր իրիկուն, Ծիրին կէրթա̈ կպախկվի, դա̈վրեշ կուգյա̈: Կնիկ կէլնի մալուլ մռութ, կէրթա̈ տիմաց: Դա̈վրեշ կասի. - Հա՞, ի՞նչ էլե, մա̈ռա̈խ կանես, չէլնի՞ Ծիրին ինգյե միտքդ:

Կնիյ կասի. - Ա՛խ չէ, Ծիրին էլ թո քյե կուրբան էլնի, ես էլ, աման տյու մեկ պան շատ քյեթր կանես, չյում իրիկուն կթռնես կէրթաս խետ քյո քյեֆին, նեճիր կանես, սարեր քյարեր, սեյրան կանես, ես խեղճ, կրակ, մենակ չյում իրիկուն կմտնեմ էօդեն, պա̈նմ էլ չկա, որ խետ խաղամ, քյո սիրուն, քյո կրակեն մրկեմ իրիցեմ, թե որ փոթնի գյաս՝ տյու էլ նեղացուկ ճա̈րտուկ կինես, կպառկես, ապա ես ի՞նչխ անեմ, սովրիր եմ խետ իմ լա̈լեքյտերաց ասել, ծծղալ, մկա ինիր եմ, մենակ մեչ մեկ էօդին մա̈ռա̈խից կմեռնեմ, որ ճար չանես:

Դա̈վրեշ կասի. - Ի՞նչ ճար անեմ, էմին եմ արե՝ քյեզնից կա̈յրի իսան-օղլի իմ տուն չմտուցեմ, յոփուշ խաղալիքյ էլ չունեմ, որ տամ խաղաս, տյու կիտես. ինչխ կուզես ըսկուն անեմ:

Կնիյ կասի. - Որ աղվորթ կասես քյո խոգյին ո՞րտեղն ի, սաս խեՆ ինոր խաղամ, չյում իրիկվից տյու կուգյաս:

Դա̈վրեշ կասի. - Տյու չե՞ս կիտե, որ իմ խոգյին էնա ավլի մեչն ի, որ տյու ավել կանես:

Կնիյ շոտմ կէլնի վեր, ավել կպիրի, ևրփշմե ալնխներով կփաթըթի, կասի. - Տնավե՛ր, ապա ի՞նչխ շուտ չիր ասե, բա̈լքյի ավել կտոտվեր:

Կառնի կնստի ավել կխաղցուցի, կուրախնա: Կտանի, կտանի պատասխան, ճրաքյ կվա̈ռի, կտնի ա̈ռա̈ճ, կասի՝ իսա իմ սոփին ի: Կուգյա̈ն կպառկեն, չյում առատուն դա̈վրեշ էլմ էլ կէլնի, կէրթա̈ ավի:

Կնիյ կպիրի խետ Ծիրինին էտա ավել կվառեն, յուրիշ ավելմ, կպիրեն փորցի խամար, խենքյ չէլնի դա̈վրեշ խապե, էլ մ՞էլ կխաղցուցի, ապրշմե ալնխներով կզա̈րտրեն, կտնեն դայ: Ձյուր իրիկուն, որ կուգյա̈ դավրեշու կալու կախ, էլմ էլ կնիկ կէլնի վէր, Ծիրինին կպախի, ավել կառնի ուրախ-ուրախ խաղցուցելեն, կէրթա̈ դա̈վրեշի տիմաց, կասի. - Էսօր աշխարն իմն ի, տեսնա՞ս ինչ խորոտ եմ խագյուցե, ինչ խորոտ կշախեմ, էսօր բիթյուն, մեյ սա̈ճա̈թվան պես ընցավ վերեն, շատ ուրախ եմ:

Դա̈վրեշ որ կտիսնա կնկյա̈ն խելքյ, կծծղա վերեն. կասի. - Տնավէ՛ր, ի՞նչխ անխելքյ ես. իսկի խոզյին կուգյա կմտնի մեչ ավլիլի՞ն, որ տյու ընկնա կանես:

Կնիկ ճամման ինատ կանի. ավել կթալի դեն, կասի. - Դա̈վրեշ, տյուն էլ իմ վերեն կծծղաս, ապա ի՞նչխ զի խապիցիր, ինչ խորոտ զի այլանչա ի կնտե, խետ կխաղի:

Դա̈վրեշ կասի. - Տնավէ՛ր, իմ խոզյին դժ՞ր ի, որ տյու պիրես խետ խաղաս:

Կնիյ կասի. - Ապա ես տե՞մ տյու կասիր մեչ ավլին ի:

Դա̈վրեշ կասի. - Իմ խոզյին նա̈ կանաս պիրե, նա̈ էլ խետ խաղա:

Կնիյ կասի. - Աղվորթ դե՛, դե՛ դժ՞ր ի, ի՞նչ կէլնի զիկ էլ ասա, թե չէ կուլամ:

Դա̈վրեշ կտիսնա, որ կնիյ մոթավ, կասի. - Կայնի բարեմ ասեմ, խենքյ տյու ի՞նչ կանես: Իմ խոզյին գյեռ Հընդնասար խազալմ կա, մեչ էն խա̈զալի փորին կութիմ կա, մեչ էն կութուն պստիկ որդմ կա, էն որդ իմ խոզյին ի, ասա՛, խա̈զալն ի՞նչ կպանեն, էտա սարի գլոխ մեկ ախպյուր կա, էտա խա̈զալ յոթն օր մեկ տիր ճյուր կխմի: Էտա սարի տակ քյաղաքյմ կա, անուն կասեն Հնդա̈ քյաղաքյ: Էտա քյաղքյի մեչ դա̈րպինմ կա, իմ քյեռին ի, ինոր դյուքնի մեչ ճոչ սնդա̈նմ կա, սնդա̈նին կասեն սնդա̈նե Ռա̈խնա̈կոզ: Երբ որ իտա սնդա̈ն կոտրի, էտա սնդա̈նի կտորներաց նետ ու աներիմ շիշ շինեն, էտա շշով էն խա̈զալ կմեռնի, թե չէ՝ ճեչ մեկ գյուլիլա̈ ինոր վերեն քյար չանե:

- Ապա ասա, սնդա̈ն ի՞նչխ կկոտրի:

- Ձյում իմ մորուսի մազեկաց էրկու-իրեքյ թել չկտրեն, տանեն տնեն վեր էն սնդնին, կռանով զա̈նեն վեր էն մազին, նոր էն սնդա̈ն կկոտրի:

Կնիյ կասի. - Բա̈ճու՛ իմ տուն ավիրավ, ապա էլ ինչ անեմ, վո՞վ պիտի էրթա̈ քյո խոզյին կնդնի, որ ես խեյ խաղամ:

Ծատ խա̈բա̈ր կուտան, քիչ խա̈բա̈ր կուտան, կպառկեն, կքյնեն:

Կնիյ կէլնի կա̈խտիկ մկրատ կպիրի, դա̈վրեշի մորուսից էրկու-իրեքյ մազ կկտրի. կփա̈թըթի մեչ թխթին, կպախի չյում առատուն, դա̈վրեշ կէլնի կէրթա̈:

Կնիյ կպիրի էտա մազեր կուտա Ծիրինին, մեյ-մեկ կպատմի Ծիրինին՝ ասածներ:

Ծիրին կէլնի կէրթա̈ մեռելի մոտ. էրկու քյար կպիրի, մեռելի ականշի իտև կչխչխկացուցի, մեռել կէլնի վէր, կէրթա̈ մո պառավ, փետեր կառնեն կինեն վեր պառվուն, էլմ էլ աղեկ պառվուն ճա̈լից կխանեն, տիկ կփչեն, կթալեն վեր ծովուն, պառավ կխեզնի, մեռել ինոր իտև, Ծիրին մեռելի իտև, կինեն վեր ծովուն յալլա՛ճ կուգյա̈ն, չյում ընդեճաց իրես կէլնեն տյուս: Մեռել կպիրի էլմ էլ պառվուն գյետնի վերեն կխաչի, կասի. - Ծիրի՛ն, ես մեռել եմ, քյաղքյներաց մեչ փռամ աղեկ չէլնե, ես կմնամ մո պառավ, պառավ չփոթնի, յախոտ անութի չմեռնի, չյում տյու կուգյաս:

Մեռել կմնա մո պառավ, Ծիրին կէրթա̈: Ծատմ կէրթա̈, քիչմ կէրթա̈, դա̈րա̈-թա̈փա դյում տեղ կէրթա̈, չյում կխասնի Հնդա̈ քյաղաքյ: Կէրթա̈ էտա դա̈րպնի խետ

պայման կանի, կասի. - Ես քյեզնից ճա̈ղ չեմ ուզե, իմ խացով քյե լոռ կպա̈նեմ, քանի որ քյո սնդա̈ն սաղ ի, որ կոտրավ, իմ ճուղի տեղ զիկ էրկու խատ նետ ու աղեղի շիշ շինես, մեյ խատ էլ նետ ու աղեղ անես:

Դա̈րպին կասի. - Տո տնավե՛ր, իսա չորս խարիր տարի ի, էն սնդընին կոտրել չկա, քյո օրո՞վ պիտի կոտրի: Ծիշն ի՞նչ անես, փա̈րա̈ ուզի, քյե փա̈րա̈ տամ:

Ծիրին կասի. - Իմ ուզածն էն ի, կուտաս՝ տյու կիտես, չես իտա՝ տյու կիտես:

Դա̈րպին կասի. - Խոգյիտ էլնի, տյու էլ ճա̈ պա̈նի. ումուտ կաց, որ սնդա̈ն կոտրի:

Կա̈վլ կանեն, սա̈նա̈թ կգյրեն, Ծիրին կբաշլայի պանել:

Մի ժամանակ վերեն կընցնի կխասնեն սարայներաց զյուռ գյուռ պանի օր, մա̈նգյա̈ղ շատ լազմ ի, դարպին կասի. - Ծիրի՛ն, ես խիվանդ եմ, կէրթա̈մ տուն. տյու կիշեր կաց. մա̈նգյա̈ղ շինի:

Ծիրինի ուզածն էլ էն էր, դա̈րպին կէրթա̈, Ծիրին կպիրի, քիչմ էրկաթ, կտայցուցի, կծոմռի. կտնի դա̈: Դա̈վրեշի մազեր կխանի տյուս, կտնի վեր սնդնին, մեյ կռան կզա̈նի, սնդա̈ն կէլնի խա̈զա̈ր փառչա:

Ծիրին կուրախնա, կքյնի չյում առատուն: Ուսթեն կուգյա̈ կտիսնա, որ սնդա̈ն կոտրե, կասի. - Է՛յ վախ, դա̈վրեշու խերն նոր անիծվավ: Ուսթեն կպիրի. սնդնի կտորներաց էրկու խատ շիշ կշինի, մեյ խատ էլ նետ ու աղեղ կառնի կուտա Ծիրինին, կասի. - Կնա՛:

Ծիրին կէրթա̈ չյում կխասնի էտա սարի գյլոխ, ախպյուր կկնդնի, ախպրի կուշտ գյետնափոր փոսմ կշինի, կմտնի մեչ, նշան զա̈նելու պստիկ ծայմ կթողնի: Ցոթն օր կթմմի, խա̈զալ կուգյա̈ զատամանց, որ կտիսնա ախպրի կուշտ սևութենմ կա, կխոտնի, կփախնի կէրթա̈:

Ցոթն օր էլ կփոա, էլմ էլ կուգյա̈, շատ ծարավ կէլնի, էլ ականջ չանե սևութեն-մնութեն, գյլոխ կմլի մեչ ախպրին, կբաշլայի ճյուր խմել: Ծիրին ըռդեճեն նշան կպռնի, մեյ խատ դրնգյ կուտա վեր խա̈զալի կողին:

Խա̈զալ կասի. - Արե՛, մուրազիդ խասար, դա̈վրեշի խերն անիծվավ:

Ծիրին սաբր կանի չյում խա̈զալ կխատնի, կէրթա̈, փոր կճղի, կութին կխանի, կառնի ուրախ-ուրախ վա̈զե վա̈զ կուգյա̈:

Ծատմ կուգյա̈, քիչմ կուգյա̈, չյում կխասնի մեռելի մոտ: Կպիրեն էլմ էլ կառնեն փետեր կուգյա̈ն տեխ պառվու ջան, աղեկմ կթփեն, տիյ կփչեն, կթա̈լեն վեր ծովուն, կէրթա̈ն չյուր կխասնեն դա̈վրեշի տուն, էլմէլ պառվուն կկապեն էնտեղ:

Մեռել էնա̈ն Ծիրին կէրթա̈ն դա̈վրեշի տուն, վերեն կկայնեն չյում իրիկուն դա̈վրեշ կուգյա̈. խելքյամաղ ի, գյլոխ կցավա, մախվան ցավ տիպեր ի, ջեռով կքյելի:

Մեռել կառնի կպա̈նա̈ կութին, որթ կխանի տյուս, կպռնի ծեռ, կասի. - Դա̈վրեշ, տես ի՞նչ խորոտ որթմ ի:

Դա̈վրեշ կասի. - Ա՛խ, թող թող էրթա̈, խեղճ ի, մի խատուցե:

Մեռել կասի. - Տիսնա՞ս, որ քյաշեմ ինչ կա̈նդա̈ր կէրկընա:

Որթ կքյաշի կէրկնցուցի, դա̈վրեշի վիզ կթյուլանա կկախվի ա̈ռա̈ճ. կասի. - Ա՛խ, մեռե՛լ, քյո բախտն եմ ինգյե, ըտըսկնա մ՝անէ, որթ խեղճ ի, տիժարս կուգյա̈:

Մեկ էլ բիրդա̈ն մեռել որթ կտրորի, կխատուցի, դա̈վրեշ թրփալեն կինի զյետին. կսատկի:

Ծիրին կառնի ուր կութին, խետ ուր կնգյան, կժողվոտեն, դա̈վրեշի տուն ինչ կա̈նդա̈ր որ ակնունքյ ջավահիր կա - ոսկի փա̈րա կա, կառնեն կուգյա̈ն: Կխասկնեն

մո պառավ, էլմ էլ պառվուն աղեկմ կթփեն. տփյ փչեն, կթալեն վեր ծովուն:

Մեռել կառնի Շիրինի կնիկ, էլած-չէլած կպիրի զղեճաց իրես կտառնա կէրթա, Շիրին էլ կպիրի:

Շիրին, ինան մեռել էնտեղ պառվու վիզն էլ կկտրեն, պառվու էլած էլած, բիթյուն կպառնան պառվու ծիանքյտերաց, կառնեն, կուգյան:

Շատոմ կուգյան, քիչմի կուգյան դարա-թափա դյում դյուզ կուգյան: Չեոլ-չիման դաշտեր կընցնեն, անվերվերի սարեր կընցնեն, օրմ էրկու, շապաթմ իրեքյ, ամիսմ չորս ճմմբմխ կուգյան, չյում կխասնեն Շիրինի խոր քյաղաքյ: Խմբւար կճմմխեն թակավորուն, թե քյո լաճ Շիրին էկավ:

Թակավոր շատ կուրախնա, թոփեր կուտա թմլել, թվանքյտեր կուտա թմլել, ծիավորներ կէլնեն խաղ, զուռնա չալկիյով, թովլով ասքյրներով Շիրինի ասռմն կէրթմն: Շիրինին կպիրեն, նոր թագմդսւն մեռելին ժամ պատարագյով, խաչ բուրվառներով կտանեն կխորեն:

Յոթն օր, յոթ կիշեր խեյրաթ կանեն մեռլի խամար:

Թակավոր կպիրի նոր թմզմդմն յոթն օր, յոթ կիշեր Շիրինի խարսնիս կանեն, ալւաղ, գյինի շատ կանեն, ուրենքյ կխասնեն ուրենց մուրազին, տուքյ էլ խասնեքյ ծեր մուրազին:

Էրկնուց իրեքյ խատ խնձոր էկավ, մեկ՝ ասողին, մեկ՝ զյրողին, մեկն էլ՝ զիկ: